ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 73-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի արտահերթ նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1 Ջերմուկ համայնքի ավագանու անդամ Նարեկ Հովհաննիսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.2 Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի երրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3 Սուբվենցիոն ծրագրերի իրականացմամբ պայմանավորված Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.4 Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների 2021 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.5 Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2021 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.6 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.7 2021 թվականի համար Ջերմուկ համայնքի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.8 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.9 Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող Կեչուտ գյուղի 7-րդ փողոցի 5-րդ շենքի N 3 բնակարանը անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.10 Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 6-ի N 71-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.11 Դրամական հատկացումներ կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Առաքելյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ-.....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- .....0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 դեկտեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 74-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՆԱՐԵԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և հիմք ընդունելով նույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան համայնքի ավագանու կողմից կազմված արձանագրությունը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Վաղաժամկետ դադարեցնել Ջերմուկ համայնքի ավագանու անդամ Նարեկ Հովհաննիսյանի լիազորությունները :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- 7 դեմ- 0 ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 75-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ընդունել ի գիտություն Ջերմուկ համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի երրորդ եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի բացակա			
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի բացակա			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի բացակա			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7.... դեմ-....0.... ձեռնպահ- ....0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 դեկտեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 76-Ն

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի Մանկական Զարգացման կենտրոնի և դրան կից խաղահրապարակի կառուցման, «Գնդեվազի մանկապարտեզ» ու «Զատիկ մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի ձախափնյա մասնաշենքի բակերի և Ջերմուկ քաղաքի բակային տարածքների ասֆալտապատման սոցիալական ենթակառուցվածքների զարգացման սուբվենցիոն ծրագրերի՝ ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորմամբ պայմանավորված՝ հաստատել Ջերմուկ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարված հետևյալ փոփոխությունները՝

բյուջեի «38-01-00-պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով սուբվենցիա» եկամտային հոդվածը ավելացնել 112772.3 հազար ՀՀ դրամով, իսկ «04.05.01.51-ճանապարհային տրանսպորտ» և «09.01.01.51- կրթություն» գործառնական դասակարգումներով, «5113- շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» և «5134- նախագծահետազոտական ծախսեր» տնտեսագիտական ծախսային հոդվածները համապատասխանաբար ավելացնել 99540.0 հազար (իննսունինը միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամով, 10323.3 հազար (տաս միլիոն երեք հարյուր քսաներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամով և 2909.0 հազար (երկու միլիոն ինը հարյուր ինը հազար) ՀՀ դրամով՝ վերոնշյալ ծրագրերով կատարվող աշխատանքների ֆինանսավորման համար:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունները հաշվի առնելով՝ ի գիտություն ընդունել Ջերմուկ համայնքի բյուջեն՝ 2020 թվականի դեկտեմբերի 24-ի դրությամբ՝

եկամուտներ՝ 864.426.200 ՀՀ դրամ

ծախսեր՝ 864.426.200 ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 դեկտեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 77-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Հաստատել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների 2021 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ-.....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- .....0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված 1

Ջերմուկ համայնքի ավագանու
2020 թ. դեկտեմբերի 24-ի N 77-Ա որոշման

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

Աշխատակազմ՝ 12

Առանձնացված ստորաբաժանումներ՝

1.Սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժին -5
2.Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ջերմուկի տարածքային բաժին-1

Կառուցվածքային ստորաբաժանումներ՝

1.Ֆինանսական բաժին -5
2.Ներքին աուդիտի բաժին-2

Քաղաքացիական աշխատանք կատարողներ-1

Տեխնիկական սպասարկման անձնակազմ – 12

Ընդհամենը՝ թվաքանակ - 38

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ *Գ. Է. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 78-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՀՈԱԿ-ՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ենթակա բյուջետային հիմնարկների և ՀՈԱԿ-ների աշխատակիցների 2021 թվականի թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ջերմուկ համայնքի արվեստի դպրոցներում դասատուների, «Ջերմուկ համայնքի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ում մարզիչների, «Ջերմուկ համայնքի քաղաքային գրադարան» համայնքային հիմնարկում մատենագետի և գրադարանավարների, «ՋԱՏԻԿ» մանկապարտեզ ՆՈՒՀ» և «Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներում դաստիարակների համար հաստատել հետևյալ դրույքաչափերը.

ա/ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողներ՝

- մինչև 15 տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ - 110 000 դրամ

- 15 և ավելի տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ - 120 000 դրամ

բ/ բարձրագույն կրթություն ունեցողներ

- մինչև 15 տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ -115 000 դրամ

-15 և ավելի տարվա մասնագիտական ստաժի առկայությամբ-125 000 դրամ

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2007 թ. հունվարի 26-ի N 29-Ն հրամանի 3-րդ և նշյալ հրամանով հաստատված N 1 հավելվածի 25-րդ կետերին համապատասխան, հաշվի առնելով, որ ամառային սեզոնի հետ կապված ավելանում է երիտասարդ կանանց զբաղվածությունը, որի հետևանքով կտրուկ ավելանում է նախադպրոցական տարիքի երեխաներին «Ձատիկ» մանկապարտեզում ժամանակավորապես տեղավորելու դիմումների քանակը՝ իրավունք վերապահել մանկապարտեզի տնօրենին, համայնքի ղեկավարի որոշմամբ, ըստ անհրաժեշտության ավելացնելու խմբերի քանակը 1-ից 2-ով: Նման խմբերում

աշխատողներին ընդունել պայմանագրային հիմունքներով՝ սահմանված կարգով կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագրեր:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- 7 դեմ- 0 ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 դեկտեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 79-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ մասին և «Տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում օրենքով սահմանված տեղական տուրքերի 2021 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում օրենքով սահմանված տեղական վճարների 2021 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:

2.1. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվելու համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել միևնույն ընտանիքից մանկապարտեզ հաճախող երկրորդ և հաջորդ երեխաների, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ և 2020 թ. հայ-ադրբեջանական պատերազմում վիրավորում ստացածների երեխաների, 100 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել Արցախյան պատերազմում և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհվածների, ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների, 2020թ. հայ-ադրբեջանական պատերազմի հետևանքով Ջերմուկ քաղաքում բնակություն (թե՛ ժամանակավոր, թե՛ մշտական) հաստատած արցախահայ ընտանիքների, այդ պատերազմում անհայտ կորած համարվողների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար:

2.2. Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայությունից օգտվելու համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել ընտանեկան նպաստ ստացող ընտանիքից արվեստի դպրոցներ հաճախող երկրորդ և հաջորդ երեխաների, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ և 2020թ. հայ-ադրբեջանական պատերազմում վիրավորում ստացածների երեխաների, 100 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել արցախյան պատերազմում և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհվածների, ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ

հաշմանդամ դարձած զինծառայողների, 2020թ. հայ-ադրբեջանական պատերազմի հետևանքով Ջերմուկ քաղաքում բնակություն (թե՛ ժամանակավոր, թե՛ մշտական) հաստատած արցախահայ ընտանիքների, այդ պատերազմում անհայտ կորած համարվողների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 դեկտեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 80-Ն

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Սահմանել 2021 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի և համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) «Ջերմուկ համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարի չափը՝ 1500 դրամ՝ մեկ ուղևորի մեկ շրջապտույտի համար,

2) հասցեների տրամադրման (վերահասցեավորման) համար՝ 20 000 ՀՀ դրամ Ջերմուկ քաղաքում, 10 000 ՀՀ դրամ՝ համայնքի գյուղական բնակավայրերերում,

3) համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման տրամադրման ծառայության վճար՝ ամսական 500 (հինգ հարյուր) դրամ՝ յուրաքանչյուր հենասյան համար ,

4) Ջերմուկ համայնքի գյուղական բնակավայրերում հանդիսությունների սրահները օգտագործման տրամադրելու համար՝ 15 000 ՀՀ դրամ՝ ուրախառիթ, անհատույց՝ սգո արարողությունների դեպքում. սրահները վարձակալողի վրա է դրվում իր արարողության համար օգտագործված էլեկտրաէներգիայի և գազի վճարների մուծման, ինչպես նաև գույքի, սպասքի և սրահի այլ իրերի հնարավոր վնասների փոխհատուցման պարտավորությունը,

5) ինժեներական ենթակառուցվածքների մոնտաժման կամ ապամոնտաժման աշխատանքների համաձայնության տրամադրման համար՝ համաձայն հավելված 1-ի,

6) համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխության ծառայության համար՝ համաձայն հավելված 2-ի,

7) համայնքի վարչական տարածքում օրինականացված ինքնակամ կառույցների, ինչպես նաև՝ բնակելի և ոչ բնակելի տարածքների օտարման կամ օգտագործման տրամադրման

համար՝ համաձայն հավելված 3-ի,

8) համայնքային սեփականության մեքենա-մեխանիզմները օգտագործման տրամադրելու համար՝ համաձայն հավելված 4-ի:

2. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին սույն որոշման 1-ին կետի 4-րդից 8–րդ ենթակետերով սահմանված վճարների համար կիրառել դրույքաչափերի նվազեցման արտոնություն 50-ից 100 տոկոսի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- .....0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 դեկտեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 81-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի (Հատված 1-ից Հատված 6):

1.1. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ՝

եկամուտներ – 583318.6 հազար ՀՀ դրամ

ծախսեր – 583318.6 հազար ՀՀ դրամ

Ընդամենը՝ վարչական բյուջե -583318.6 հազար ՀՀ դրամ

1.2. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

եկամուտներ – 50000.0 հազար ՀՀ դրամ

ծախսեր – 50000.0 հազար ՀՀ դրամ

Ընդամենը՝ ֆոնդային բյուջե- 50000.0 հազար ՀՀ դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեն՝ 633318.6 հազար ՀՀ դրամ:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում բյուջեի տնտեսագիտական դասակարգման հոդվածների միջև կատարել ներքին վերաբաշխումներ, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի սույն որոշմամբ հաստատված չափաքանակների 15 %-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից հետո առաջացած հարաբերությունների վրա:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 դեկտեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 82-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ 5-ՐԴ ՇԵՆՔԻ N 3 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող (հիմք՝ սեփականության իրավունքի N 01112020-10-0009 վկայական) Կեչուտ գյուղի 7-րդ փողոցի 5-րդ շենքի N 3 բնակարանը, մակերեսը՝ 129,58 քմ, համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ, այդ բնակարանը օգտագործող և տիրապետող Նարեկ Խորենի Խուրշուդյանին անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- .....0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 դեկտեմբերի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 83-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի N 71-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 6-ի «Ջերմուկ քաղաքի Խաչիձորի փողոցի N 4/1 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» N 71-Ա որոշման մեջ կատարել լրացում. որոշման 1-ին կետի բովանդակությունն ավարտել «՝ սպանդանոց կառուցելու նպատակով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			
Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի	բացակա		
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....6.... դեմ-....1.... ձեռնպահ- ....0....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2020 թ. N 84-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 12-Ն որոշմամբ հաստատված կարգը և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչների դիմումներն ու դրանց հիման վրա համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (սոցիալական աշխատող) կողմից կազմված սոցիալական դեպքի վարման գործերը, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի 2020 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից 200 000-ական (երկու հարյուր հազարական) դրամ ֆինանսական օգնություններ տրամադրել համայնքի հետևյալ բնակիչներին՝ *Հայկուշ Գալստյան, Գրետա Իխտիարյան, Ռուզաննա Գրիգորյան:*

2. Հայ-ադրբեջանական պատերազմի օրերին ռազմաճակատում (Արցախի Հանրապետության տարածքում) և թիկունքում կամավոր կատարած անձնուրաց աշխատանքի, հաղթանակի գործում անմնացորդ ներդրում ունենալու, անհրաժեշտ աշխատանքները կատարելուն արագ ու պատրաստակամ արձագանքելու, անձամբ մասնակցելու համար Ջերմուկ համայնքի անունից շնորհակալագրերով պարգևատրել Ջերմուկ համայնքի բնակիչներ *Արթուր Կարապետյանին, Սարգիս Համբարձումյանին, Վասակ Ստեփանյանին, Վահան Մկրտչյանին և Արտուշ Սիմոնյանին*՝ վերջին երեքին հատկացնելով նաև դրամական պարգևատրում՝ յուրաքանչյուրին 100 000 (հարյուր հազար) դրամի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Բաբայան Կավկազ Զավենի	բացակա		
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի			

Գևորգյան Արտավազդ Վարազդատի			
Գրիգորյան Արմեն Գրիշայի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Սարգսյան Հասմիկ Ժորայի			
Սիմոնյան Արտուշ Էդվարդի			
Ստեփանյան Գագիկ Ստեփանի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...6... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 դեկտեմբերի 24
Ջերմուկ